ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ

GEFF Green Economy Financing Facility

European Bank for Reconstruction and Development

ԽԹԱՆԵԼՈՎ ԿԱՅՈՒՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Աջակցությունը՝

GREEN CLIMATE FUND

CIF

GEFF-Ն ԱՋԱԿՑՈՒՄ Է ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Շատ ընկերություններ ամեն օր կախված են տրանսպորտային միջոցներից, իսկ որոշ ընկերությունների համար հենց մեքենաներն են հանդիսանում բիզնես: Մի քանի տարի առաջ բենզինով և դիզելով մեքենաներն ավելի գործնական ընտրություն էին՝ այսինքն կարելի էր արագ լիցքավորել մեքենան և սպասարկվել գրեթե ամենուր: Սակայն ժամանակները փոխվել են:

Շնորհիվ ավելի դիմացկուն մարտկոցների, արագ լիցքավորման և զարգացող ենթակառուցվածքի՝ էլեկտրական մեքենաներն արդեն դարձել են առօրյա գործունեության անբաժան մաս: Օգտվելով GEFF-ը Հայաստանում ծրագրի աջակցությունից՝ տեղական ձեռնարկություններն այժմ հասկանում են, որ երկարաժամկետ հեռանկարում էլեկտրական մեքենաներն՝

- ավելի մաքուր են,
- ավելի խնայող
- և ավելի հուսալի:

GEFF-ի ֆինանսավորումը բիզնեսներին օգնում է համատեղել կայունությունն ու շահութաբերությունն՝ առաջարկելով խրախուսական մեխանիզմներ անցման գործընթացում!

Ֆինանսավորման պահանջներին համապատասխանող վարկառուները կարող են ստանալ գումարի վերադարձ (cashback)՝

> 10% **էլեկտրական մեքենաների համար**, **և**
> 15% **լիցքավորման կայանների համար՝**

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԻԶՆԵՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Էլեկտրական տրանսպորտին անցնելը նվազեցնում է մեքենաների շահագործման և սպասարկման ծախսերը: Էլեկտրական մեքենաների շնորհիվ դուք՝

- Խուսափում եք մեքենայի յուղի անընդմեջ փոխարինումից և բազմաթիվ այլ վերանորոգումներից:
- Ավելի քիչ եք ծախսում շահագործման վրա:
- Ունենում եք անխափան մեքենա՝ մշտական հուսալիության շնորհիվ:
- Ապահովում եք արդյունավետություն քաղաքային երթևեկության մեջ՝ վերականգնողական արգելակման համակարգի շնորհիվ:

Էլեկտրական մեքենաներին անցնելը նշանակում է, որ ձեր բյուջեի ավելի մեծ մասը կուղղվի բիզնեսի զարգացմանը, այլ ոչ թե վառելիքի ծախսերին:

ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՐԱԳ ՔԱՅԼԵՐՈՎ ՇԱՐԺՎՈՒՄ Է ԴԵՊԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԱՊԱԳԱ

Հայաստանում էլեկտրական տրանսպորտային միջոցների ոլորտն արագորեն զարգանում է, և բիզնեսները կարող են լիովին օգտվել այդ առաջընթացից: Կառավարության աջակցող ծրագրերն ու մասնավոր ներդրումները ձևավորում են ավելի գործնական և տնտեսապես արդյունավետ միջավայր էլեկտրական մեքենաների կիրառման համար: Գլխավոր զարգացումները ներառում են՝

Երկրում էլեկտրական մեքենաների ներմուծման **զգալի աճ**

Էլեկտրական մեքենաների համար **ԱԱՀ-ից ազատում** մինչև 2027 թվականի հունվար ամիսը

Էլեկտրական մեքենաների շահագործման ծավալների ընդլայնում՝ տնային տնտեսություններից մինչև բեռնափոխադրումներ, տաքսի ծառայություններ և հասարակական տրանսպորտ

Ավելի շատ լիցքավորման տարբերակներ՝ մասնավոր ձեռնարկությունների միջոցով, ինչպիսիք են plug.am-ը և Team Energy-ն

Տեղական ինքնակառավարման մարմինների օրենսդրական փոփոխություններ, որոնք կարող են **նվազեցնել էլեկտրական մեքենաների կայանման և շահագործման ծախսերը**

Աջակցություն՝ **էլեկտրական մեքենաների ներդրումները համակցելու արևային էներգիայի** և այլ վերականգնվող լուծումների հետ

Խոշոր քաղաքներում **արագ և հարմարավետ լիցքավորման ենթակառուցվածքների ոլորտում շարունակական ներդրումներ**

Արդյունքում ձևավորվում է ավելի գրավիչ շուկա այն բիզնեսների համար, որոնք այսօր ընտրում են էլեկտրական լուծումներն՝ ապահովելով մրցունակ ծախսերի առավելություն առաջիկա տարիների ընթացքում:

ՀԱՄԱԿՑՎԱԾ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Համակցված լուծումները միավորում են էլեկտրական տրանսպորտը, արևային կամ այլ վերականգնվող էներգիայի աղբյուրները և էներգիայի կուտակման տեխնոլոգիաները՝ ստեղծելով միասնական ներդրումային մոտեցում:

Այսպիսի համակցված մոտեցումները նվազեցնում են էներգիայի ծախսերը, բարձրացնում հուսալիությունը և խթանում մաքուր էներգիայի օգտագործումը: Ընտրված լուծումներից կախված՝ հնարավոր է ստանալ լրացուցիչ դրամական խթաններ (cashback):

ԷՄ + արևային ֆոտովոլտային համակարգ. Համադրեք Ձեր ԷՄ-ի գնումը արևային էլեկտրակայանի տեղադրման հետ:	• Լիցքավորեք ձեր էլեկտրական մեքենան 100% մաքուր էներգիայով • Խուսափեք լիցքավորման համար էլեկտրաէներգիայի ծախսերից • Կրճատեք ածխածնային ազդեցությունը • Ստացեք լրացուցիչ 15% ետ վերադարձ արևային վահանակների բաղադրիչի համար
ԷՄ + արևային վահանակների համակարգ + կուտակիչներ. Միացրեք Ձեր ԷՄ-ն արևային ֆոտովոլտային համակարգին, որն ապահովված է էներգիայի կուտակման մարտկոցով:	• Պահեստավորեք արևային էներգիան ցանկացած պահին ԷՄ-ի լիցքավորման համար • Բարձրացրեք էներգետիկ անկախությունը • Առավելագույնի հասցրեք վերականգնվող էներգիայի օգտագործումը • Ստացեք լրացուցիչ 15% ետ վերադարձ արևային ֆոտովոլտային համակարգի և կուտակիչի համար
ԷՄ + արևային լիցքավորման կայան + կուտակիչ. Համադրեք էլեկտրական մեքենայի լիցքավորումն արևային էլեկտրաէներգիայի արտադրության և էներգակուտակման հետ:	• Արևային էներգիայով աշխատող լիցքավորման կայաններ • Ավելի ցածր շահագործման ծախսեր • Բարձրացրեք ձեր գույքի արժեքն ու գրավչությունը • Ստացեք լրացուցիչ 15% ետ վերադարձ կուտակիչ համակարգով արևային ֆոտովոլտային կայանի համար:

GEFF-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄՆ ԸՆԴԳՐԿՈՒՄ Է ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԼԱՅՆ ՇՐՋԱՆԱԿ

GEFF-ը Հայաստանում ծրագիրը խթանում է կանաչ ներդրումները՝ համապատասխանեցնելով այն ձեր բիզնեսի բազմազան կարիքներին.

Մարդատար մեքենաներ	Էլեկտրական մեքենաներ, որոնք հարմար են ընկերության ավտոպարկի համար:
Թեթև կոմերցիոն մեքենաներ	Փիքափներ, միկրոավտոբուսներ և ֆուրգոններ՝ իդեալական տարբերակներ առաքման, բեռնափոխադրումների և սպասարկման ոլորտի ընկերությունների համար:
Ծանր տրանսպորտային միջոցներ	Բեռնատարներ, ավտոբուսներ և այլ կոմերցիոն մեքենաներ՝ արդյունաբերական և համայնքային գործունեության համար:
Համակցված վերականգնվող համակարգեր	Էլեկտրական մեքենաների համակցում արևային վահանակների և էներգակուտակիչների հետ՝ առավելագույն ծախսարդյունավետություն ապահովելու համար:

GEFF-Ը ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԾՐԱԳԻՐԸ ՁԵՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐԵԼՈՒ ԵՐԿՈՒ ՄՈՏԵՑՈՒՄ ՈՒՆԻ

Նախահաստատված ներդրումներ. Եթե արդեն գիտեք, թե որ տեխնոլոգիայի մեջ կցանկանայիք ներդրում կատարել, օգտագործեք մեր Կանաչ տեխնոլոգիաների ցանկ հարթակը: Այս առցանց տվյալների բազան պարունակում է 300,000 ԱՄՆ դոլարից (կամ այլ արժույթներին համարժեք) պակաս կանաչ և բարձր արդյունավետությամբ տեխնոլոգիաներ, որոնք արդեն հաստատված են GEFF-ի ֆինանսավորման համար:

Գնահատում անցած տեխնոլոգիաներ. Եթե ներդրվող տեխնոլոգիան բարդ է և պահանջում է անհատականացված մոտեցում, որպես մեր գործընկեր ֆինանսական կառույցներից մեկի պոտենցիալ վարկառու, կարող եք դիմել մեր ԱՆՎՃԱՐ տեխնիկական աջակցությանը: GEFF-ի խորհրդատուները կտրամադրեն մասնագիտական խորհրդատվություն՝ ապահովելու համար, որ դուք գտնեք GEFF-ի ֆինանսավորման համար ընդունելի ամենահարմար կանաչ տեխնոլոգիաներն ու ծառայությունները:

GREEN TECHNOLOGY SELECTOR

Հասանելիություն Կանաչ տեխնոլոգիաների ցանկին

ՏԵՂԵԿԱՑԵՔ, ԹԵ ԻՆՉՊԵՍ GEFF-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄՆ ՕԳՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԻ ՄԱՍՆԱՎՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՆԵԼ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ

Հայկական այս տեքստիլ արտադրող ընկերությունն արդիականացրել է իր լոգիստիկ աշխատանքները՝ դիզելային բեռնատարները փոխարինելով էլեկտրական բեռնատարներով և տեղում տեղադրելով լիցքավորման ենթակառուցվածք:

Ներդրումը նպաստում է հումքի տեղափոխմանը, արտադրական օբյեկտների միջև փոխադրումներին և պատրաստի արտադրանքի առաքմանը՝ միաժամանակ նվազեցնելով գործառնական ծախսերն ու արտանետումները:

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	Տեքստիլ արտադրություն
ՆԵՐԴՐՈՒՄ	6 էլեկտրական մեքենա, 6 լիցքավորման կայան
ՆԵՐԴՐՄԱՆ ԳՈՒՄԱՐԸ	219,500 ԱՄՆ դոլար
ՆՊԱՏԱԿԸ	Հումքի տեղափոխում Արտադրական օբյեկտների միջև փոխադրումներ Պատրաստի արտադրանքի առաքում
GEFF-Ի ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ	10% մեքենաների գնման համար 15% լիցքավորման կայանների գնման համար
ԷՆԵՐԳԻԱՅԻ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ	33 ՄՎտժ տարեկան
CO2-Ի ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	8.5 տոննա տարեկան

ԻՆՉՊԵՍ GEFF-Ի ԱՌԱՋԱՐԿԱԾ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՁԵՐ ՕԳՏԻՆ ԱՇԽԱՏԵՑՆԵԼ

I. Ընտրեք էլեկտրական մեքենաներ, որոնք լավագույնս համապատասխանում են ձեր բիզնեսի կարիքներին՝ օգտագործելով կամ Կանաչ տեխնոլոգիաների ընտրիչ-ը կամ ուղղակիորեն դիմելով վաճառողներին

II. Ամփոփեք ձեր առաջարկվող ներդրման տեխնիկական և ֆինանսական պահանջները

III. Դիմեք գործընկեր ֆինանսական կառույցներից մեկին՝ GEFF-ի ֆինանսավորվում ստանալու նպատակով

IV. Անհրաժեշտության դեպքում դիմեք անվճար խորհրդատվության և նախագծի գնահատման համար GEFF-ի փորձագետների թիմին

V. Ֆինանսավորումն իրականացրեք վարկի կամ լիզինգի պայմանագրի միջոցով

VI. Գնեք և ներդրեք ընտրված տեխնոլոգիաներ

VII. Օգտվեք երկարաժամկետ էներգախնայողությունից, իսկ որոշ դեպքերում՝ ֆինանսական շահույթից

Սպասում ենք ձեր արձագանքին և պատրաստ ենք պատասխանել ձեր հարցերին:

GEFF-Ը ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԾՐԱԳԻՐ
Արեա51 Բիզնես կենտրոն | Ոսկերիչների փողոց 2/9
0015 Երևան, Հայաստան
armenia@ebrdgeff.com | +374 12 542721

Պատրաստվել է 2025 թվականի հոկտեմբերի 29-ին